

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

[▶B](#)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2004 թվականի դեկտեմբերի

15-ի 2004/107/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Մթնոլորտային օդում մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների առկայության մասին

(ՊՏ L 023, 26.01.2005թ., էջ 3)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

թիվ էջ ամսաթիվ

[▶M1](#) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 L 87 109 31.03.2009թ.
թվականի մարտի 11-ի 219/2009 (ԵՀ)
կանոնակարգով

▼B

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2004 թվականի դեկտեմբերի 15-ի
2004/107/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

**Մթնոլորտային օդում մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ
բազմացիկլային ածխաջրածինների առկայության մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,
հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,
հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը (1),
Տարածաշրջանային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,
գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (2),
Քանի որ

1) Պայմանագրի 175 (3) հոդվածով ամրագրված սկզբունքների հիման վրա կազմված՝
Համայնքի բնապահպանական գործողությունների վեցերորդ ծրագիրը, որն ընդունվել է
Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1600/2002/ԵՀ որոշմամբ (3), սահմանում է
աղտոտվածության մակարդակի նվազեցման կարիքը, որը մարդու առողջությանը և
շրջակա միջավայրին սպառնացող վնասակար ազդեցությունները նվազագույնին
հասցնելու համար անհրաժեշտ է՝ հատկապես հաշվի առնելով բնակչության խոցելի
խմբերին՝ հանրությանը տեղեկատվություն տրամադրելու և օդի որակի դիտանցումն ու
գնահատումը բարելավելու համար՝ ներառյալ աղտոտող նյութերի նստեցումները,

2) «Մթնոլորտային օդի որակի գնահատման և կառավարման մասին» (4) Խորհրդի 1996
թվականի սեպտեմբերի 27-ի 96/61/ԵՀ հրահանգի 4 (1) հոդվածում պահանջվում է, որ
Հանձնաժողովը ներկայացնի այդ հրահանգի I հավելվածում թվարկված աղտոտող
նյութերը կարգավորող առաջարկներ՝ հաշվի առնելով այդ հոդվածի 3-րդ և 4-րդ

պարբերություններում նշված դրույթները,

3) գիտական փաստերը ցույց են տալիս, որ մկնդեղը, կադմիումը, նիկելը և որոշ հոտավետ բազմացիկլային ածխաջրածիններ գենոտոքսիկ քաղցկեղածիններ են և որ չկա կոնկրետ սանդղակ, որից ցածր լինելու դեպքում այս նյութերը մարդու առողջության համար վտանգ չեն ներկայացնում: Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը տեղի է ունենում մթնոլորտային օդում կոնցենտրացիաների և նստվածքների միջոցով: Հաշվի առնելով ծախսարդյունավետությունը՝ որոշ տարածքներում հնարավոր չէ մթնոլորտային օդում հասնել մկնդեղի, կադմիումի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների այնպիսի կոնցենտրացիաների, որոնք մարդու առողջության համար լուրջ վտանգ չներկայացնեն,

4) նպատակ ունենալով նվազագույնին հասցնելու մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա մկնդեղի, կադմիումի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների վնասակար ազդեցությունները, հատուկ ուշադրություն դարձնելով բնակչության խոցելի խմբերին՝ սահմանվում են նպատակային սահմաններ, որոնք պետք է հնարավորինս պահպանվեն: Բենզապիրենը կիրառվում է որպես հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների քաղցկեղածին ռիսկի ցուցիչ,

5) նպատակային սահմաններով չեն կարող պահանջվել այնպիսի միջոցներ, որոնք անհամաչափ ծախսեր են ներառում: Ինչ վերաբերում է արդյունաբերական սարքավորումներին, դրանք չեն ներառում լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բացի այլ միջոցներ, ինչպես սահմանված է «Աղտոտվածության կանխարգելման և վերահսկման համապարփակ մեխանիզմների մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգով (5) և, մասնավորապես, չեն հանգեցնում սարքավորումների շահագործման դադարեցմանը: Այնուամենայնիվ, դրանք պահանջում են, որ անդամ պետությունները համապատասխան բոլոր բաժինների համար ձեռնարկեն ծախսարդյունավետ պաշտպանիչ միջոցները,

6) մասնավորապես, սույն Հրահանգի նպատակային սահմանները չեն համարվում շրջակա միջավայրի որակի ստանդարտ, ինչպես նշված է 96/61/ԵՀ հրահանգի 2 (7) հոդվածում, և որով, այդ հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն, պահանջվում է ավելի խիստ պայմաններ, քան լավագույն հասանելի տեխնոլոգիաների օգտագործման միջոցով ձեռք բերված պայմաններն են,

7) պայմանագրի 176-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները կարող են մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների վերաբերյալ ավելի խիստ պաշտպանական միջոցներ պահպանել կամ ներմուծել՝ պայմանով, որ դրանք համատեղելի են Պայմանագրի հետ և ներկայացվում են Հանձնաժողով,

8) եթե կոնցենտրացիաները գերազանցում են սահմանային թույլատրելի նորման, ապա մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի դիտանցումը պարտադիր է: Գնահատման լրացուցիչ միջոցները կարող են նվազեցնել ամրակայված վայրերից կատարվող նմուշառումների դիտակետերի անհրաժեշտ թիվը: Նախատեսվում է ֆոնային մթնոլորտային օդի կոնցենտրացիաների և նստեցման հետագա դիտանցում,

9) սնդիկը մարդու առողջության և շրջակա միջավայրի համար շատ վտանգավոր նյութ է: Շրջակա միջավայրում այն առկա է որպես մեթիլ սնդիկ և օրգանիզմներում կուտակվելու ունակություն ունի. դրանց առավելագույն կոնցենտրացիան հնարավոր է սնդիկի շղթայի առավել բարձր օղակում առկա օրգանիզմներում: Մթնոլորտ արտանետված սնդիկը կարող է շատ երկար տարածություններ անցնել,

10) Հանձնաժողովը մտադիր է 2005 թվականին հանդես գալ հետևողական ռազմավարությամբ, որն ընդգրկում է մարդու առողջությունը և շրջակա միջավայրը սնդիկի արտահոսքից պաշտպանող միջոցառումներ, այն առաջնորդվում է կենսական պարբերաշրջանի վրա հիմնված մոտեցմամբ և որում հաշվի են առնվում արտադրությունը, օգտագործումը, թափոնների մշակումը և արտանետումները: Հանձնաժողովն այս համատեքստում պետք է քննարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝

նպատակ ունենալով նվազեցնելու սնդիկի քանակը ցամաքային և ջրային էկոհամակարգերում՝ դրանով իսկ խուսափելով սննդի հետ միասին սնդիկ կուլ տալուց և որոշ արտադրատեսակներում սնդիկի առկայությունից,

11) մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների ազդեցությունը մարդու առողջության, այդ թվում՝ սննդի շղթայի միջոցով և ընդհանուր շրջակա միջավայրի վրա, տեղի է ունենում մթնոլորտային օդում առկա կոնցենտրացիաների ու նստվածքների միջոցով. պետք է հաշվի առնել ստորգետնյա ջրերի պահպանությունը և այդ նյութերի կուտակումները հողում: 2010 թվականին սույն Հրահանգի վերանայումը խթանելու համար Հանձնաժողովը և անդամ պետությունները կատարում են մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների ազդեցություններին, հատկապես նստվածքի միջոցով, խթանող պատճառների ուսումնասիրություն,

12) չափազրման ստանդարտացված հստակ մեթոդները և չափումների համար նախատեսված տեղանքների ընտրության ընդհանուր չափանիշները մթնոլորտային օդի որակի գնահատման գործում կարևոր տարրեր են այնքանով, որ կուտակված տեղեկատվությունը Համայնքի տարածքում համեմատական լինի: Չափումների ստանդարտ մեթոդները կարևոր խնդիր են համարվում: Հանձնաժողովը սահմանված նպատակային արժեքներ ունեցող մթնոլորտային օդում առկա բաղադրիչների չափումների համար ՍԵԿ ստանդարտների պատրաստման (մկնդեղ, կադմիում, նիկել և բենզապիրեն), ինչպես նաև ծանր մետաղների նստեցումների վերաբերյալ աշխատանքներ է արդեն հանձնարարել՝ նպատակ ունենալով դրանք ընդունելու և արագ զարգացնելու: ՍԵԿ-ի ստանդարտ մեթոդների բացակայության դեպքում թույլատրվում է կիրառել չափումների միջազգային կամ ազգային ստանդարտ մեթոդները,

13) կարգավորվող արտանետումների նստեցումների և մթնոլորտային օդի կոնցենտրացիաների վերաբերյալ թարմացված տեղեկատվությունը ներկայացվում է Հանձնաժողովն՝ որպես կանոնավոր հաշվետվությունների հիմք,

14) կարգավորվող արտանետումների նստեցումների և մթնոլորտային օդի կոնցենտրացիաների վերաբերյալ թարմացված տեղեկատվությունը մատչելի է դարձվում հանրությանը,

15) անդամ պետությունները սույն Հրահանգի նորմերի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոններ են սահմանում և ապահովում են այդ կանոնների կիրառումը: Նշված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ,

16) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն «Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների կիրառման ընթացակարգերը սահմանելու մասին» Խորհրդի 1999 թվականի հունիսի 28–ի 1999/468/ԵՀ որոշման համաձայն (6),

17) սույն Հրահանգը գիտական և տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար անհրաժեշտ փոփոխությունները պարզապես վերաբերում են Հանձնաժողովին տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ մանրամասն միջոցառումներին կամ կարգավորվող արտանետումների կոնցենտրացիաների և նստեցումների գնահատման չափանիշներին ու տեխնիկաներին: Դրանք չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոփոխեն նպատակային սահմանները,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ

Հոդված 1

Նպատակները

Սույն Հրահանգի նպատակները հետևյալն են՝

ա) սահմանել նպատակային սահման՝ մթնոլորտային օդում առկա մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի կոնցենտրացիայի համար՝ խուսափելու, կանխելու կամ

նվազեցնելու նպատակով մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա մկնդեղի, կադմիումի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների վնասակար ազդեցությունը.

բ) ապահովել, որ եթե մթնոլորտային օդը մաքուր է մկնդեղից, կադմիումից, նիկելից և հոտավետ բազմացիկլային ածխաջրածիններից, ,ապա օդի որակը պահպանվի, իսկ այլ դեպքերում՝ բարելավվի.

գ) սահմանել մթնոլորտային օդում առկա մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների կոնցենտրացիաների, ինչպես նաև մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների նստեցումների ընդհանուր մեթոդներն ու չափանիշները.

դ) ապահովել մթնոլորտային օդում առկա մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների կոնցենտրացիաների, ինչպես նաև մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների նստեցումների մասին բավարար տեղեկատվություն ձեռք բերելը և այն հանրությանը մատչելի դարձնելը:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով՝ կիրառվում են 96/62/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածում նշված սահմանումները՝ բացառությամբ «նպատակային սահման» սահմանման:

Սույն Հրահանգի նպատակները հետևյալն են՝

ա) «նպատակային սահման» նշանակում է որևէ նյութի կոնցենտրացիան մթնոլորտային օդում՝ ընդհանուր առմամբ նպատակ ունենալով խուսափելու, կանխելու կամ նվազեցնելու մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը, որը կարելի է վերականգնել որոշակի ժամանակահատվածում.

բ) «ընդհանուր կամ մասամբ նստեցում» նշանակում է աղտոտող նյութերի ընդհանուր զանգված, որը որոշակի ժամանակահատվածում մթնոլորտից փոխանցվում է որոշակի տարածության մակերեսներին (օրինակ՝ բնահողը, բուսականությունը, ջուրը, շենքերը և

այլն).

- գ) «գնահատման վերին շեմ» նշանակում է ներքևում՝ II Հավելվածում նշված մակարդակ, որը կիրառվում է չափումները համակենտրոնացնելիս և տեխնիկաները մոդելավորելիս մթնոլորտային օդի որակը գնահատելու համար՝ համաձայն 96/62/ԵՀ հրահանգի 6(3) հոդվածի.
- դ) «գնահատման ստորին շեմ» նշանակում է ներքևում՝ II Հավելվածում նշված մակարդակ, որը կիրառվում է չափումները համակենտրոնացնելիս և տեխնիկաները մոդելավորելիս մթնոլորտային օդի որակը գնահատելու համար՝ համաձայն 96/62/ԵՀ հրահանգի 6(4) հոդվածի.
- ե) «ամրակայված դիտակայաններում կատարվող չափումներ» նշանակում է այնպիսի չափումներ, որոնք իրականացվում են ամրակայված վայրերում շարունակաբար կամ պատահական նմուշառման մեթոդով՝ համաձայն 96/62/ԵՀ հրահանգի 6(5) հոդվածի.
- զ) «մկնդեղ», «կադմիում», «նիկել» և «բենզապիրեն» նշանակում է այս տարրերի և դրանց միացությունների ընդհանուր պարունակությունը ՊՄ10 չափամասում.
- է) «ՊՄ10» նշանակում է պինդ մասնիկներ, որոնք կարող են անցնել ԵՆ 12341-ում նշված՝ ըստ չափերի դասակարգող ֆիլտրի միջով՝ 50 տոկոսի ճշգրտությամբ, հաշվի առնելով 10մկմ ատրոդինամիկական տրամագիծը.
- ը) «հոտավետ բազմացիկլային ածխաջրածիններ» նշանակում է այն օրգանական միացությունները, որոնք ամբողջությամբ բաղկացած են ածխածնից և ջրածնից կազմված առնվազն երկու արոմատիկ օղակներից.

թ) «բացարձակ սնդիկի գոլորշի» նշանակում է սովորական սնդիկի գոլորշի (HgO) և գազային վիճակում ռեակտիվ սնդիկ, այսինքն՝ ջրում լուծվող սնդիկի այն տեսակները, որոնք կարող են գազային վիճակում մնալ բավականաչափ բարձր ճնշման պայմաններում:

Հոդված 3

Նպատակային սահմանները

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցառումները, չներառելով անհամաչափ ծախսերը, ապահովելու համար, որ 2012 թվականի դեկտեմբերի 31-ից մթնոլորտային օդում առկա մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի կոնցենտրացիաները, որոնք, գնահատվելով 4-րդ հոդվածի համաձայն, կիրառվում են որպես հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների քաղցկեղածին ռիսկի ցուցիչներ, չգերազանցեն I-ին հավելվածում նշված նպատակային սահմանները:

2. Անդամ պետությունները կազմում են այն գոտիների և ազլոմերացիաների ցուցակները, որտեղ մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի մակարդակը ցածր է անհրաժեշտ նպատակային սահմանից: Անդամ պետությունները պահպանում են այդ աղտոտող նյութերի մակարդակն այն գոտիներում և ազլոմերացիաներում, որտեղ դրանց մակարդակը ցածր է անհրաժեշտ նպատակային սահմանից և ձգտում են պահպանել մթնոլորտային օդի լավագույն որակը՝ կայուն զարգացման հետ համատեղ:

3. Անդամ պետությունները կազմում են այն գոտիների և ազլոմերացիաների ցուցակները, որտեղ I-ին հավելվածում նշված նպատակային սահմանները գերազանցվել են:

Անդամ պետությունները նշում են տվյալ գոտիներում և ազլոմերացիաներում գերազանցման տարածքները և դրան նպաստող աղբյուրները: Անդամ պետությունները, չներառելով անհամաչափ ծախսերը, ներկայացնում են տվյալ տարածքներում ձեռնարկված անհրաժեշտ բոլոր միջոցառումները, որոնք, մասնավորապես, ուղղված են աղտոտող նյութերի հիմնական աղբյուրներին, որպեսզի հնարավոր լինի հասնելու նպատակային սահմաններին: Եթե արդյունաբերական սարքավորումների շահագործումը կարգավորվում է 96/61/ԵՀ հրահանգով, ապա դա նշանակում է, որ անհրաժեշտ է կիրառել լավագույն հասանելի տեխնոլոգիաները՝ ինչպես սահմանված է տվյալ հրահանգի 2 (11) հոդվածով:

Հոդված 4

Մթնոլորտային օդի կոնցենտրացիաների և նստեցման արագության գնահատումը

1. Մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի առումով մթնոլորտային օդի որակը գնահատվում է անդամ պետությունների տարածքում:

2. 7-րդ պարբերության մեջ նշված չափանիշների համաձայն՝ չափումները պարտադիր են հետևյալ գոտիներում՝

ա) գոտիներ և ագլոմերացիաներ, որտեղ մակարդակը գնահատման վերին և ստորին շեմերի միջև է,

բ) այլ գոտիներ և ագլոմերացիաներ, որտեղ մակարդակները գերազանցում են գնահատման վերին շեմը:

Նախատեսված չափումներն իրականացնելիս կարելի է օգտվել մոդելավորման տեխնիկաներից՝ մթնոլորտային օդի որակի մասին տեղեկատվության բավարար մակարդակ ապահովելու համար:

3. Չափումների ամբողջությունը՝ ներառյալ IV հավելվածի I բաժնում նշված ինդիկատիվ չափումները և մոդելավորման տեխնիկաները, կարող են կիրառվել՝ գնահատելու համար մթնոլորտային օդի որակն այն գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ մակարդակները փորձնական ժամանակահատվածում գնահատման վերին և ստորին շեմերի միջև են, որոնք որոշվում են II հավելվածի II բաժնի համաձայն:

4. Այն գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ մակարդակները ցածր են գնահատման ստորին շեմից, որը որոշվում է՝ համաձայն II հավելվածի II բաժնի, հնարավոր է մոդելավորման կամ գնահատման տեխնիկաների կիրառումը՝ մակարդակները գնահատելու նպատակով:

5. Եթե աղտոտող նյութերը ենթակա են չափման, ապա չափումները կատարվում են ամրակայված վայրերում շարունակաբար կամ պատահական նմուշառման մեթոդով: Չափումների թիվը պետք է լինի բավարար, որպեսզի հնարավոր լինի որոշելու մակարդակները:

6. Մթնոլորտային օդում մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի քանակության գնահատման վերին և ստորին շեմերը սահմանվում են II հավելվածի I բաժնում նշված ձևով:

Սույն հոդվածի նպատակով յուրաքանչյուր գոտու կամ ագլոմերացիայի դասակարգումը վերանայվում է առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ համաձայն II հավելվածի II բաժնով սահմանված ընթացակարգի: Մթնոլորտային օդում մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի խտության հետ կապված գործողություններում նշանակալի փոփոխության դեպքում դասակարգումը կարող է ավելի շուտ վերանայվել:

7. Պարզելու համար, թե արդյոք մթնոլորտային օդում մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի քանակը համապատասխանում է նպատակային սահմաններին, թե ոչ, իրականացվում են չափումներ, որոնց համար նմուշառման դիտակետերը որոշելու նպատակով նախատեսված չափանիշները թվարկված են III հավելվածի I և II բաժիններում: Յուրաքանչյուր աղտոտող նյութի կոնցենտրացիան ամրակայված վայրերից չափելու համար նմուշառման դիտակետերի նվազագույն թիվը պետք է լինի այնքան, որքան նշված է III հավելվածի IV բաժնում, և դրանք պետք է տեղադրվեն յուրաքանչյուր գոտում կամ ագլոմերացիայում, որտեղ չափումներն անհրաժեշտ են, եթե ամրակայված չափումն այդ տարածքի կոնցենտրացիաների վերաբերյալ տվյալներ ստանալու միակ աղբյուրն է:

8. Մթնոլորտային օդում բենզապիրենի կոնցենտրացիան գնահատելու համար յուրաքանչյուր անդամ պետություն չափումների համար նախատեսված սահմանափակ թվով վայրերում վերահսկում է համապատասխան այլ հոտավետ բազմացիկլային ածխաջրածինները: Սույն միացություններն առնվազն ընդգրկում են՝ բենզո(a)անտրացեն, բենզո(b)ֆլուորանթեն, բենզո(j)ֆլուորանթեն, բենզո(k)ֆլուորանթեն, ինդեն(1,2,3-cd)պիրեն և դիբենզ(a, h)անտրացեն: Այս հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների դիտանցման վայրերը համատեղ տեղակայվում են բենզապիրենի նմուշառման վայրերի հետ և ընտրվում են այնպես, որ հնարավոր լինի սահմանելու աշխարհագրական փոփոխությունը և երկարաժամկետ միտումները: Կիրառվում են III հավելվածի I, II և III բաժինները:

9. Անկախ կոնցենտրացիայի մակարդակից՝ յուրաքանչյուր 100 000 քառակուսի կիլոմետրի վրա տեղադրվում է ֆոնային նմուշառման մեկ դիտակետ՝ մթնոլորտային օդում մկնդեղի, կադմիումի, նիկելի, բացարձակ սնդիկի գոլորշու, բենզապիրենի և այլ հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների, որոնք նշված են 8-րդ պարբերության մեջ, քանակի, ինչպես նաև 8-րդ պարբերության մեջ նշված մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի, բենզապիրենի և այլ հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների նստեցման ինդիկատիվ չափումների համար: Յուրաքանչյուր անդամ պետություն հիմնում է չափումների առնվազն մեկ կայան: Այնուամենայնիվ, անդամ պետությունները, համաձայն 6 (2) հոդվածով սահմանված կարգավորիչ ընթացակարգի հիման վրա կազմված ուղեցույցների կամ, ըստ

համաձայնության, կարող են հիմնել ընդհանուր չափումների մեկ կամ մի քանի կայաններ, որոնք կընդգրկեն անդամ պետություններին հարող հարևան գոտիները՝ անհրաժեշտ տարածական թույլտվություն ձեռք բերելու համար: Խորհուրդ է տրվում չափել նաև փոշի և գազային երկվալենտ սնդիկը: Դիտանցումն անհրաժեշտության դեպքում համաձայնեցվում է Աղտոտող նյութերի դիտանցման և գնահատման եվրոպական ռազմավարության ու չափումների ծրագրի (Եվրոպայի դիտանցման և գնահատման ծրագիր) հետ: Այդ աղտոտող նյութերի նմուշառման վայրերն ընտրվում են այնպես, որ հնարավոր լինի սահմանելու աշխարհագրական փոփոխությունը և երկարաժամկետ միտումները: Կիրառվում են III հավելվածի I, II և III բաժինները:

10. Էկոհամակարգերի վրա ազդեցության տարածքային առանձնահատկությունները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել կենսաինդիկատորների կիրառումը:

11. Այն գոտիներում և ագլոմերացիաներում, որտեղ չափագրման ամրակայված կայաններից ստացվող տեղեկատվությանը կից ներկայացվում է այլ աղբյուրներից ստացված տեղեկատվություն, ինչպես, օրինակ՝ արտանետումների գույքագրումից, ինդիկատիվ չափումների մեթոդներից և օդի որակի մոդելավորումից, չափագրման համար հիմնվող ամրակայված կայանների թիվը և այլ տեխնիկաների տարածքային թույլտվությունը պետք է համապատասխանի օդն աղտոտող նյութերի կոնցենտրացիաներին, որոնք սահմանվում են III հավելվածի I բաժնի և IV հավելվածի I բաժնի համաձայն:

12. Տվյալների որակի ապահովման պահանջներն ամրագրված են IV հավելվածի I բաժնում: Գնահատման ժամանակ օդի որակի մոդելներից օգտվելիս կիրառվում է IV հավելվածի II բաժինը:

13. Մթնոլորտային օդում առկա մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների նմուշառման և վերլուծության ստանդարտ մեթոդներն ամրագրված են V հավելվածի I և II բաժիններում: V հավելվածի IV բաժինը սահմանում է մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների ընդհանուր նստեցումը չափելու ստանդարտ մեթոդները, իսկ V հավելվածի V բաժինը վերաբերում է օդի որակի մոդելավորման ստանդարտ մեթոդներին, եթե այդ մեթոդները հասանելի են:

14. Այն օրը, երբ անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են օդի որակի նախնական գնահատման համար կիրառվող, 96/62/ԵՀ հրահանգի 11 (1) (դ) հոդվածում նշված մեթոդների մասին, սույն Հրահանգի 10-րդ հոդվածում նշված օրն է:

▼M1

15. III, IV և V հավելվածների, II հավելվածի II բաժնի և սույն հոդվածի դրույթները գիտական և տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար Հանձնաժողովն ընդունում է անհրաժեշտ ցանկացած փոփոխություն: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 6(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Դրանք չեն կարող հանգեցնել նպատակային սահմանների որևէ ուղղակի կամ անուղղակի փոփոխությունների:

▼B

Հոդված 5

Տեղեկատվության փոխանցումը և հաշվետվությունը

1. Ինչ վերաբերում է այն գոտիներին և ագլոմերացիաներին, որտեղ I հավելվածում նշված նպատակային սահմանները գերազանցվել են, անդամ պետությունները Հանձնաժողով տեղեկություններ են ուղարկում հետևյալի մասին՝

ա) տվյալ գոտիների և ագլոմերացիաների ցուցակների,

բ) թույլատրելի սահմանները գերազանցող տարածքների,

գ) խտության թույլատրելի սահմանային մակարդակների,

դ) գերազանցման պատճառների և, մասնավորապես, դրան նպաստող աղբյուրների.

ե) թույլատրելի սահմանները գերազանցող տարածքների բնակչության:

Անդամ պետությունները զեկուցում են նաև բոլոր այն բոլոր տվյալների մասին, որոնք գնահատվել են 4-րդ հոդվածի համաձայն, եթե դրանց մասին դեռ չի զեկուցվել՝ համաձայն «Անդամ պետություններում մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը չափող առանձին կայաններից և ցանցերից ստացվող տեղեկատվության ու տվյալների փոխադարձ փոխանակում կազմակերպելու մասին» Խորհրդի 1997 թվականի հունվարի 27-ի 97/101/ԵՀ որոշման (7):

Տեղեկատվությունը հաղորդվում է յուրաքանչյուր օրացուցային տարվա համար հաջորդ տարվա սեպտեմբերի 30-ից ոչ ուշ, իսկ առաջին անգամ փոխանցելու դեպքում՝ 2007 թվականի փետրվարի 15-ին հաջորդող օրացուցային տարվա համար:

2. Բացի 1-ին պարբերությամբ սահմանված պահանջներից՝ անդամ պետությունները զեկուցում են նաև ցանկացած միջոցառման մասին, որը ձեռնարկվում է 3-րդ հոդվածի համաձայն:

3. Հանձնաժողովն ապահովում է, որ 1-ին պարբերության համաձայն ներկայացված ամբողջ տեղեկատվությունն անմիջապես մատչելի դարձվի հանրությանը համապատասխան միջոցներով, ինչպիսիք են, օրինակ՝ համացանցը, մամուլը կամ մյուս դյուրամատչելի լրատվամիջոցները:

▼M1

4. Հանձնաժողովը, համաձայն 6(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի, ընդունում է մանրամասն միջոցառումներ՝ փոխանցելու համար սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված տեղեկությունները:

▼B

Հոդված 6

Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է 96/62/ԵՀ հրահանգի 12 (2) հոդվածով ստեղծված կոմիտեն:

2. Այն դեպքերում, երբ հղում է արվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

▼M1

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 7

Հանրության համար նախատեսված տեղեկատվությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ մթնոլորտային օդում 4 (8) հոդվածում նշված մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի, բենզապիրենի և այլ հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների կոնցենտրացիաների, ինչպես նաև 4 (8) հոդվածում նշված մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի, բենզապիրենի և այլ հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների նստեցման արագության մասին պարզ և դյուրըմբռնելի տեղեկատվությունը լինի հասանելի և կանոնավոր կերպով մատչելի հանրության, ինչպես նաև համապատասխան կազմակերպությունների համար, ինչպիսիք բնապահպանության հարցերով զբաղվող կազմակերպությունները, սպառողական կազմակերպությունները, բնակչության խոցելի խմբերի և առողջապահական այլ համապատասխան մարմինների շահերը ներկայացնող կազմակերպություններն են:

2. Տեղեկատվության մեջ ներկայացվում է նաև մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի՝ I հավելվածում ներկայացված նպատակային սահմանների տարեկան գերազանցումը: Տեղեկատվության մեջ ներկայացվում են գերազանցման պատճառները և այն տարածքները, որոնց դրանք վերաբերում են: Այն նաև տրամադրում է նպատակային սահմանների համառոտ գնահատումը և տեղեկատվություն՝ առողջության ու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների վերաբերյալ :

3-րդ հոդվածի համաձայն ձեռնարկված ցանկացած միջոցառման մասին տեղեկատվությունը տրամադրվում է սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված կազմակերպություններին:

3. Տեղեկատվությունը հասանելի է դարձվում, օրինակ՝ համացանցի, մամուլի կամ այլ հասանելի լրատվամիջոցներով:

Հոդված 8

Զեկույցը և վերանայումը

1. Հանձնաժողովը 2004 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ զեկույց է ներկայացնում, որը հիմնված կլինի հետևյալի վրա՝

ա) սույն Հրահանգի կիրառման ժամանակ ձեռք բերված փորձ,

բ) մասնավորապես, վերջին գիտական հետազոտության արդյունքները, որոնք վերաբերում են մարդու առողջությանը սպառնացող ազդեցություններին՝ հատկապես ուշադրություն դարձնելով բնակչության խոցելի խմբերին, ինչպես նաև ընդհանուր բնապահպանությանը, մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների ազդեցությանը.

գ) տեխնոլոգիական զարգացումները՝ ներառյալ չափագրման մեթոդների և մթնոլորտային օդում աղտոտող այս նյութերի կոնցենտրացիաները, ինչպես նաև դրանց նստեցումները գնահատելու այլ մեթոդների արդյունքում ձեռք բերված առաջխաղացումը:

2. Առաջին պարբերության մեջ նշված զեկույցը հաշվի է առնում հետևյալը՝

ա) օդի ներկայիս որակը, մինչև 2015 թվականը և դրանից հետո ակնկալվող միտումներն ու կանխատեսումները.

բ) համապատասխան բոլոր աղբյուրներից ծագող աղտոտիչ նյութերի հետագա նվազեցում կատարելու ոլորտը և մարդու առողջությանը սպառնացող ռիսկերի նվազեցման նպատակ հետապնդող սահմանային արժեքների և I հավելվածում թվարկված՝ աղտոտող նյութերը ներկայացնելու հնարավոր արժանիքները՝ հաշվի առնելով տեխնիկական պիտանիությունը և ծախսարդյունավետությունը, ինչպես նաև առողջության ու շրջակա միջավայրի պահպանության ցանկացած այլ կարևոր միջոց, որը դա կարող է ապահովել.

գ) աղտոտող նյութերի և Համայնքի օդի որակը բարելավելու համար համախմբած ռազմավարությունների և նման այլ նպատակների հնարավորությունների միջև հարաբերությունները.

դ) անդամ պետությունների և Հանձնաժողովի միջև տեղեկատվության փոխանակման և հանրությանը տեղեկատվություն տրամադրելու համար անհրաժեշտ ներկա և ապագա պահանջները.

ե) անդամ պետություններում սույն Հրահանգի կիրառման ժամանակ ձեռք բերված փորձը և, մասնավորապես, այն պայմանները, որոնց ներքո չափումներն իրականացվել են III հավելվածում նշված ձևով.

զ) բնապահպանության և առողջության հարցերում երկրորդական տնտեսական օգուտները, որոնք ուղղված են մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների արտանետումները նվազեցնելուն, այնքան, որ հնարավոր լինի գնահատելու այն.

է) նմուշառման համար կիրառվող մասնիկների չափամասերի համապատասխանությունը՝ նկատի ունենալով ընդհանուր պինդ մասնիկների չափումների պահանջները.

ը) բենզապիրենի՝ որպես հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների ընդհանուր քաղցկեղածին գենի ակտիվության ցուցիչի համապատասխանությունը՝ հաշվի առնելով հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների, ինչպես, օրինակ՝ ֆլուորանթենի սկզբնական գազային վիճակը:

Հաշվի առնելով գիտական և տեխնոլոգիական վերջին զարգացումները՝ Հանձնաժողովը նաև ուսումնասիրում է մկնդեղի, կադմիումի և նիկելի ազդեցությունը մարդու առողջության վրա՝ նպատակ ունենալով չափելու դրանց գենոտոքսիկ քաղցկեղածին լինելը: Հաշվի առնելով սնդիկի ռազմավարության համաձայն ընդունված միջոցները՝ Հանձնաժողովը քննարկում է, թե արդյոք սնդիկի հետ կապված հետագա գործողություններ ձեռնարկելը որևէ արժեք կունենա՝ հաշվի առնելով տեխնիկական պիտանիությունը և ծախսարդյունավետությունը, ինչպես նաև առողջության ու շրջակա միջավայրի պահպանության ցանկացած այլ կարևոր միջոց, որը դա կարող է ապահովել:

3. Նպատակ ունենալով հասնելու մթնոլորտային օդի կոնցենտրացիայի այնպիսի մակարդակների, որոնք հետագայում կնվազեցնեն մարդու առողջության վրա բացասական ազդեցությունը և կհանգեցնեն շրջակա միջավայրի պաշտպանության ավելի բարձր մակարդակի, հաշվի առնելով հետագա գործողությունների տեխնիկական պիտանիությունը և ծախսարդյունավետությունը՝ 1-ին պարբերության մեջ նշված զեկույցին, անհրաժեշտության դեպքում, կարող են կցվել սույն Հրահանգի փոփոխության առաջարկներ՝ մասնավորապես ,հաշվի առնելով 2-րդ պարբերության համաձայն ձեռք բերված արդյունքները: Բացի դրանից՝ Հանձնաժողովը քննարկում է մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հատուկ հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների նստեցումների կարգավորման խնդիրները:

Հոդված 9

Տույժերը

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող տույժերը և ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ

միջոցները՝ ապահովելու դրանց կիրարկումը: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ:

Հոդված 10

Կիրարկումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթներն ամենաուշը մինչև 2007 թվականի փետրվարի 15-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին ուղեկցվեն նման հղումով: Անդամ պետությունները որոշում են նման հղում անելու ձևը:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 11

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակումից հետո քսաներորդ օրը:

Հոդված 12

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի համար նախատեսված նպատակային սահմանները

Աղտոտող նյութը	Նպատակային սահմանը (1)
Մկնդեղ	6 նգ/մ ³
Կադմիում	5 նգ/մ ³
Նիկել	20 նգ/մ ³
Բենզապիրեն	1 նգ/մ ³

(1) ՊՄ10 չափանասում առկա ընդհանուր պարունակության միջինը հաշվարկված է մեկ օրացուցային տարվա կտրվածքով:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Համապատասխան գոտիների կամ ազլոմերացիաների մթնոլորտային օդում առկա մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի կոնցենտրացիաների գնահատման պահանջների սահմանումը

I. Գնահատման վերին և ստորին շեմերը

Գնահատման վերին և ստորին հետևյալ շեմերը կիրառվում են՝

	Մկնդեղ	Կադմիում	Նիկել	Բենզապիրեն
Գնահատման վերին շեմը՝ արտահայտված նպատակային սահմանների տոկոսներով	60 % (3.6 նգ/մ ³)	60 % (3 նգ/մ ³)	70 % (14 նգ/մ ³)	60 % (0.6 նգ/մ ³)
Գնահատման ստորին շեմը՝ արտահայտված նպատակային սահմանների տոկոսներով	40 % (2.4 նգ/մ ³)	40 % (2 նգ/մ ³)	50 % (10 նգ/մ ³)	40 % (0.4 նգ/մ ³)

II. Գնահատման վերին և ստորին շեմերի գերազանցման դեպքերի սահմանումը

Գնահատման վերին և ստորին շեմերի գերազանցությունը որոշվում է նախորդ հինգ տարվա ընթացքում կոնցենտրացիաների հիման վրա, եթե, իհարկե, անհրաժեշտ տվյալները հասանելի են: Գնահատման շեմը համարվում է գերազանցված, եթե նախորդ հինգ տարուց երեք տարվա ընթացքում այն գերազանցվել է:

Եթե հասանելի են հինգից պակաս տարիների տվյալներ, անդամ պետությունները կարող են համախմբել արտանետումների մոդելավորումից և գույքագրումից ստացված տեղեկատվության միջոցով կուտակած արդյունքներ ունեցող աղտոտվածության ամենաբարձր մակարդակին բնորոշ տեղանքներից մեկ տարվա համար նախատեսված

հսկիչ-չափիչ կարճատև միջոցառումները՝ որոշելու համար գնահատման վերին ու ստորին շեմերի գերազանցումը:

**Մթնոլորտային օդում առկա կոնցենտրացիաների և նստեցման արագության
չափումների համար նմուշառման դիտակետերի տեղանքն ու նվազագույն թիվը**

I. Մեծամասշտաբ կայանքի տեղադրումը

Նմուշառման դիտակետերի տեղանքը պետք է ընտրել այնպես, որ դրանք

— տվյալներ տրամադրեն այնպիսի գոտիներ և ագլոմերացիաներ ունեցող տարածքների մասին, որտեղ բնակչությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ենթարկվում է մեկ օրացուցային տարվա կտրվածքով հաշվարկված առավելագույն կոնցենտրացիաների ազդեցությանը.

— տրամադրեն տվյալներ այն տարածքների մակարդակների մասին, որտեղ կան գոտիներ և ագլոմերացիաներ, որոնք ընդհանուր բնակչության վրա ներգործության օրինակ են.

— տրամադրեն տվյալներ նստեցման արագության վերաբերյալ, որոնք ներկայացնում են բնակչության վրա սննդային շղթայի միջոցով տեղի ունեցող անուղղակի ներգործությունը:

Նմուշառման դիտակետերը պետք է տեղակայված լինեն այնպես, որ խուսափեն անմիջապես իրենց հարող տարածքներում շատ փոքր միկրոմիջավայրերի չափումներից: Որպես ուղեցույց նմուշառման դիտակետը պետք է ներկայացնի օդի որակը շրջակա տարածքներում՝ 200մ² երթևեկության հետ կապ ունեցող տարածքներում, անհրաժեշտության դեպքում՝ առնվազն 250մ×250մ արդյունաբերական հրապարակներում և մի քանի քառակուսի կիլոմետր՝ ֆոնային աղտոտման դիտանցման քաղաքային կայաններում:

Եթե նպատակը ֆոնային մակարդակի գնահատումն է, ապա նմուշառման դիտակետի վրա չպետք է ազդեն ագլոմերացիաները կամ իրեն հարող տարածքների արդյունաբերական հրապարակները, օրինակ՝ մի քանի կիլոմետրից մոտ գտնվող կայանները:

Եթե գնահատվում է արդյունաբերական աղբյուրներից ստացվող օժանդակությունը, ապա բնակելի ամենամոտ տարածքում այդ աղբյուրի հողմահակառակ մասում պետք է հիմնվի նմուշառման առնվազն մեկ դիտակետ: Եթե ֆոնային կոնցենտրացիան անհայտ է, ապա քամու հիմնական ուղղությամբ նմուշառման լրացուցիչ դիտակետ պետք է հիմնել: Մասնավորապես, եթե կիրառվում է 3 (3) հոդվածը, ապա նմուշառման դիտակետերը տեղակայվում են այնպես, որ հնարավոր լինի լավագույն հասանելի տեխնոլոգիաների դիտանցումը:

Նմուշառման դիտակետերը հնարավորության դեպքում ներկայացնում են նաև իրենց՝ ոչ անմիջապես հարող տարածքների համապատասխան տեղանքները: Դրանք անհրաժեշտության դեպքում համատեղվում են ՊՄ10 չափամասի նմուշառման դիտակետերի հետ:

II. Փորձամասշտաբ կայանքի տեղադրումը

Հետևյալ կետերով նախատեսվող պահանջները հնարավորինս պետք է պահպանվեն՝

— մուտքային մասի նմուշառումը չպետք է արգելվի՝ առանց որևէ խոչընդոտի, որը կարող է ազդել նմուշառիչի սահմաններում օդի հոսքի վրա (դրանք սովորաբար պետք է մի քանի մետր հեռու լինեն շինություններից, պատշգամբներից, ծառերից և այլ խոչընդոտներից և առնվազն 0,5 մետր հեռու՝ մոտակա շենքից, եթե նմուշառման դիտակետերը ներկայացնում են մոտակա կառուցապատման գոտու օդի որակը).

— ընդհանրապես, մուտքային մասի նմուշառիչը պետք է լինի գետնից 1,5մ-ից (օդափոխության գոտի) մինչև 4մ բարձրության վրա: Ավելի բարձր դիրքերը (մինչև 8մ) կարող են անհրաժեշտ լինել հատուկ դեպքերում: Կարելի է տեղադրել ավելի բարձր կայան, եթե տվյալ կայանը նախատեսված է ավելի մեծ տարածքի համար.

— մուտքային մասին նմուշառիչը չպետք է տեղադրվի աղբյուրներին անմիջականորեն հարող տարածքներում՝ մթնոլորտային օդի հետ չխառնված արտանետումների անմիջապես կլանումից խուսափելու համար.

— նմուշառիչի արտանետման անցքի դիրքը պետք է ընտրել այնպես, որ հնարավոր լինի խուսափելու դուրս եկող օդի՝ դեպի նմուշառիչ ֆիլտր վերաշրջապտույտից.

— երթևեկությանն ուղղված նմուշառման կետերն առնվազն 25 մետր հեռու պետք է լինեն գլխավոր կայանների սահմաններից և առնվազն 4 մետր հեռու՝ մոտակա երթևեկության գոտու կենտրոնից. ընդունիչները պետք է տեղակայվեն այնպես, որ կարողանան ներկայացնել մոտակա կառուցապատման գոտու օդի որակը.

— ֆոնային աղտոտման դիտանցման գյուղական կայաններում կուտակումների չափումների համար Եվրոպայի դիտանցման և գնահատման ծրագրի ուղեցույցներն ու չափանիշները կիրառվում են հնարավորինս երկար և այն դեպքերում, որոնք նախատեսված չեն հավելվածներով:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետևյալ գործոնները՝

- խոչընդոտների աղբյուրները
- անվտանգությունը
- հասանելիության հնարավորությունը
- էլեկտրական հոսանքի և հեռախոսային հաղորդակցությունների մատչելիությունը
- շրջակա տարածքներից տվյալ կայանքի տեսանելիությունը
- հանրության և օպերատորների անվտանգությունը
- տարբեր աղտոտող նյութերի համար նմուշառման դիտակետերի համատեղման ցանկալիությունը
- պլանավորման պահանջները:

III. Տարածքի ընտրության հետ կապված փաստաթղթերի կազմումն ու վերանայումը

Տարածքի ընտրության ընթացակարգերն ըստ դասակարգման ամբողջությամբ փաստաթղթավորվում են այնպիսի միջոցներով, ինչպիսիք հարակից տարածքների compass-point լուսանկարները և մանրամասն կազմված քարտեզն են: Տարածքները վերանայվում են կանոնավոր միջակայքերով և կրկնակի փաստաթղթագրմամբ՝ ապահովելու համար, որ ընտրության չափանիշները ժամանակի ընթացքում շարունակվեն պահպանվել:

IV. Մթնոլորտային օդում մկնդեղի, կադմիումի, նիկելի և բենզապիրենի խտությունների՝ ամրակայված վայրերից չափումներ կատարելու համար նախատեսված նմուշառման դիտակետերի թիվը որոշելու չափանիշները

Ամրակայված դիտակայաններից կատարվող չափումներ կատարելու համար նախատեսված նմուշառման դիտակետերի նվազագույն թիվը, որի նպատակը նպատակային սահմանների հետ համապատասխանությունը գնահատելն է՝ պաշտպանելու համար մարդու առողջությունն այն գոտիներում և ազլոմերացիաներում, որտեղ ամրակայված դիտակայաններից կատարվող չափումները տեղեկատվության միակ աղբյուրն են:

ա) Դիֆուզիայի աղբյուրները

Ազլոմերացիայի կամ գոտու բնակչությունը (հազար)	Եթե առավելագույն խտությունը գերազանցում է գնահատման վերին շեմը (1)	Եթե առավելագույն խտությունը գտնվում է գնահատման վերին և ստորին շեմերի միջև		
	As, Cd, Ni	B(a)P	As, Cd, Ni	B(a)P
0-749	1	1	1	1
750-1 999	2	2	1	1
2 000-3 749	2	3	1	1
3 750-4 749	3	4	2	2
4 750-5 999	4	5	2	2
≥ 6 000	5	5	2	2
1) Ֆոնային աղտոտման դիտանցման քաղաքային առնվազն մեկ կայան կամ բենզապիրենի համար տրանսպորտային երթևեկության դիտանցման կայան ներառելը չի նպաստում նմուշառման դիտակետերի թվի աճին:				

բ) Աղտոտման կետային աղբյուրներ

Աղտոտման կետային աղբյուրներին հարող տարածքներում աղտոտվածության գնահատման համար ամրակայված չափումների նմուշառման դիտակետերի թիվը որոշվում է՝ հաշվի առնելով արտանետումների կոնցենտրացիան, մթնոլորտային օդի աղտոտվածության բաշխման ցանկալի մոդելը և բնակչության վրա հնարավոր ներգործությունը:

Նմուշառման դիտակետերը պետք է այնպես տեղակայված լինեն, որ 96/61/ԵՀ հրահանգի 2 (11) հոդվածով նախատեսված լավագույն հասանելի տեխնոլոգիաների դիտանցումը հնարավոր լինի:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

Օդի որակի մոդելի վերաբերյալ պահանջներն ու տվյալների որակի ապահովման պահանջները

I. Տվյալների որակի ապահովման պահանջները

Տվյալների որակի ապահովման հետևյալ պահանջները ներկայացվում են որպես որակի ապահովման ուղեցույց:

	Բենզապիրեն	Մկնդեղ, կադմիում և նիկել	Բենզապիրենից և բացարձակ սնդիկի գոլորշուց բացի այլ հոտավետ բազմացիկլային ածխաջրածիններ	Ընդհանուր նստեցում
—Անորոշությունը				
Ամրակայված և ինդիկատիվ չափումները	50 %	40 %	50 %	70 %
Մոդելավորումը	60 %	60 %	60 %	60 %
— Նվազագույն տվյալների կուտակումը	90 %	90 %	90 %	90 %
— Նվազագույն ժամկետների սահմանները՝				
Ամրակայված չափումներ	33 %	50 %		
Ինդիկատիվ չափումներ (*)	14 %	14 %	14 %	33 %

(*) Ինդիկատիվ չափումներն այն չափումներն են, որոնք իրականացվում են նվազեցված կանոնավորությամբ, սակայն իրականացնում են տվյալների որակի ապահովման մյուս պահանջները:

Մթնոլորտային օդում առկա խտությունների գնահատման համար կիրառվող մեթոդների անորոշությունը (արտահայտված 95 % վստահության մակարդակով) գնահատվում է ՍԵԿ–ի ուղեցույցով նախատեսված սկզբունքների համաձայն՝ արտահայտելու համար անորոշություն չափումների (ENV 13005-1999), ԻՍՕ 5725:1994 մեթոդաբանության, ՍԵԿ–ի «Օդի որակ – Մոտեցում մեթոդների գնահատման անորոշության վերաբերյալ» զեկույցի (CR 14377:2002E) նկատմամբ: Անորոշության այս տոկոսները ներկայացված են առանձին չափումների համար, որոնք միջինացվում են՝ ըստ տիպային նմուշի ընտրության ժամկետների 95 % վստահելիության մակարդակի: Չափագրման անորոշությունը մեկնաբանվում է համապատասխան նպատակային սահման ունեցող տարածքներում կիրառվելիս: Ամրակայված վայրերից իրականացվող և ինդիկատիվ չափումները պետք է հավասարապես բաշխվեն տարվա ընթացքում՝ խուսափելու համար արդյունքների աղավաղումից:

Նվազագույն տվյալների կուտակման և ժամկետային սահմանների պահանջները չեն ներառում վերահսկիչ և չափիչ սարքավորումների ստուգարկման կամ տեխնիկական սպասարկման հետևանքով տվյալների կորուստը: Բենզապիրենի և այլ հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների չափումների համար անհրաժեշտ է քսանչորսժամյա նմուշառում: Այն առանձին նմուշները, որոնց վերցնելու ժամկետից անցել է մինչև մեկ ամիս, կարող են զգուշորեն համակցվել և վերլուծության ենթարկվել որպես միացյալ նմուշ՝ պայմանով, որ այս մեթոդն ապահովի նմուշների՝ որոշակի ժամանակով կայունությունը: Նույն դասին պատկանող հետևյալ տարրերի՝ բենզո(b)ֆլուորանթենետ, բենզո(j)ֆլուորանթենետ, բենզո(k)ֆլուորանթենետ, անալիտիկ վերլուծությունը կարող է դժվար լինել: Նման դեպքերում դրանք ընկալվում են որպես համակցություն: Մկնդեղի, կադմիումի և նիկելի կոնցենտրացիաները չափելու համար խորհուրդ է տրվում քսանչորսժամյա նմուշառում: Նմուշառման գործընթացը պետք է հավասարապես բաշխվի տարվա և շաբաթվա օրերի միջև: Նստեցման արագությունը ամսական կամ շաբաթական կտրվածքով չափելու համար անհրաժեշտ են ամբողջ տարվա ընթացքում հավաքած նմուշները:

Անդամ պետությունները կարող են եղած նյութերի կույտից նմուշառում կատարելու փոխարեն օգտվել մթնոլորտային տեղումներից, եթե կարողանան ապացուցել, որ դրանց միջև տարբերությունը 10 %-ի սահմաններում է: Նստեցման արագությունը յուրաքանչյուր օրվա համար պետք է լինի $\mu\text{g}/\text{m}^2$:

Անդամ պետությունները կարող են կիրառել աղյուսակում նշված ժամկետների նվազագույն սահմաններից սեղմ ժամկետներ, բայց ոչ ավելի սեղմ, քան 14 %՝ ամրակայված վայրերից չափումներ իրականացնելու համար, 6 %՝ ինդիկատիվ չափումների համար, որը ենթադրում է, որ նրանք կարող են ապացուցել, որ հնարավոր է ապահովել տարեկան 95 % ընդլայնված անորոշություն, որը հաշվարկվում է տվյալների որակի ապահովման պահանջներով՝ համաձայն ԻՍՕ 11222:2002 — «Օդի որակի չափումների միջին ժամկետների անորոշության սահմանումից»:

II. Օդի որակի մոդելների համար անհրաժեշտ պահանջները

Գնահատման ժամանակ օդի որակի մոդելից օգտվելիս հղումներ են արվում անորոշության մասին տեղեկատվության և մոդելի նկարագրությունների վերաբերյալ: Մոդելավորման անորոշությունը որոշվում է՝ ելնելով մեկ ամբողջ տարվա կտրվածքով կոնցենտրացիայի չափված և հաշվարկված մակարդակների առավելագույն շեղումից՝ հաշվի չառնելով իրադարձությունների ժամանակահատվածը:

III. Նպատակների գնահատման մեթոդների համար ներկայացվող պահանջները

Նպատակների գնահատման մեթոդները կիրառելիս անորոշությունը չպետք է գերազանցի 100 %-ը:

IV. Ստանդարտացումը

ՊՄ10 չափամասում վերլուծության ենթարկվող նյութերի նմուշառման դեպքում ընտրանքի ծավալը կախված է շրջակա միջավայրի պայմաններից:

**Մթնոլորտային օդում առկա կոնցենտրացիաների և նստեցման արագությունը
գնահատելու ստանդարտ մեթոդները**

**I. Մթնոլորտային օդում մկնդեղի, կադմիումի և նիկելի նմուշառման ու վերլուծության
ստանդարտ մեթոդները**

Մթնոլորտային օդում մկնդեղի, կադմիումի և նիկելի կոնցենտրացիաների չափումների ստանդարտ մեթոդն արդեն ստանդարտացվում է ՍԵԿ-ի կողմից և դա արվում է ՊՄ10-ի նմուշառման ձեռնարկի հիման վրա, որը համարժեք է ԵՄ 12341-ին, ինչին հետևում է Ատոմաբարոքցիոն սպեկտրաչափման կամ ինդուկտիվորեն կապված պլազմայի զանգվածային սպեկտրաչափման միջոցով նմուշների վերլուծությունն ու յուրացումը: ՍԵԿ-ի ստանդարտ մեթոդի բացակայության դեպքում անդամ պետությունները կարող են կիրառել ազգային ստանդարտ մեթոդներ կամ ԻՍՕ ստանդարտ մեթոդներ:

Անդամ պետությունը կարող է կիրառել նաև ցանկացած այլ մեթոդ, որն արտահայտում է վերոհիշյալ մեթոդները կամ դրանց համարժեք արդյունք է տալիս:

**II. Մթնոլորտային օդում հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների նմուշառման և
վերլուծության ստանդարտ մեթոդները**

Մթնոլորտային օդում բենզապիրենի խտության չափումների ստանդարտ մեթոդն արդեն ստանդարտացվում է ՍԵԿ-ի կողմից և դա արվում է ՊՄ10-ի նմուշառման ձեռնարկի հիման վրա, որը համարժեք է ԵՄ 12341-ին: ՍԵԿ-ի ստանդարտ մեթոդի բացակայության դեպքում 4 (8) հոդվածում նշված բենզապիրենի և այլ հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների համար անդամ պետությունները կարող են կիրառել ազգային ստանդարտ մեթոդներ կամ ԻՍՕ ստանդարտ մեթոդներ, ինչպես, օրինակ՝ ԻՍՕ 12884 ստանդարտն է:

Անդամ պետությունը կարող է կիրառել նաև ցանկացած այլ մեթոդ, որն արտահայտում է վերոհիշյալ մեթոդները կամ դրանց համարժեք արդյունք է տալիս:

III. Մթնոլորտային օդում սնդիկի նմուշառման և վերլուծության ստանդարտ մեթոդները

Մթնոլորտային օդում բացարձակ գազային սնդիկի կոնցենտրացիան չափելու ստանդարտ մեթոդը ավտոմատացված մեթոդ է՝ հիմնված Ատոմաաբսորբցիոն սպեկտրաչափման կամ ատոմա-ֆլուորեսցենտային սպեկտրաչափման վրա: ՍԵԿ-ի ստանդարտ մեթոդի բացակայության դեպքում անդամ պետությունները կարող են կիրառել ազգային ստանդարտ մեթոդներ կամ ԻՍՕ ստանդարտ մեթոդներ:

Անդամ պետությունը կարող է կիրառել նաև ցանկացած այլ մեթոդ, որն արտահայտում է վերոհիշյալ մեթոդները կամ դրանց համարժեք արդյունք է տալիս:

IV. Մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների նստեցման նմուշառման և վերլուծության ստանդարտ մեթոդները

Մկնդեղի, կադմիումի, սնդիկի, նիկելի և հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների նստեցման նմուշառման և վերլուծության ստանդարտ մեթոդները հիմնվում են մթնոլորտում նստվածքային շերտը չափող, ստանդարտացված եզրաչափերով գլանաձև սարքը ներկայացնելու վրա: ՍԵԿ-ի ստանդարտ մեթոդի բացակայության դեպքում անդամ պետությունները կարող են ազգային ստանդարտ մեթոդներ կիրառել:

[**▼M1**](#)

V. Օդի որակի մոդելավորման ստանդարտ տեխնիկաները

Օդի որակի մոդելավորման ստանդարտ տեխնիկաները ներկայումս չեն կարող սահմանվել: Այս կետը գիտական և տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար Հանձնաժողովը կարող է փոփոխություններ կատարել: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 6(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

1) ՊՏ C 110, 30.04.2004թ., էջ 16:

2) Եվրոպական պառլամենտի 2004 թվականի ապրիլի 20-ի եզրակացություն (դեռևս հրապարակված չէ Պաշտոնական տեղեկագրում) և Խորհրդի 2004 թվականի նոյեմբերի 15-ի որոշում:

3) ՊՏ L 242, 10.09.2002թ., էջ 1:

4) ՊՏ L 296, 21.11.1996թ., էջ 55: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1):

5) ՊՏ L 257, 10.10.1996թ., էջ 26: ` Վերջին անգամ թիվ 1882/2003/ԵՀ կանոնակարգով փոփոխված հրահանգ :

6) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

7) ՊՏ L 35, 05.02.1997թ., էջ 14: Հանձնաժողովի 2001/752/ԵՀ որոշմամբ (ՊՏ L 282, 26.10.2001թ., էջ 69) փոփոխված հրահանգ: